

«Կենգուրու 2010» մրցույթի մասնակցության վճարների
վերադարձման ընթացակարգ
գործում է մինչև **2010 թ.-ի ապրիլի 16-ը** ներառյալ

«Կենգուրու 2010» միջազգային մաթեմատիկական խաղ-մրցույթի համար վճարված 970 ՀՀ դրամը վերադարձվում է, եթե երեխան չի մասնակցել մրցույթին, այսինքն՝ նրա անունը չկա դպրոցի մրցույթին մասնակցող աշակերտների վերջնական ցանկում կամ չկա նրա պատասխանների թերթիկը: Գումարները հետ ստանալ կարող են երեխաների ծնողները հետևյալ 2 տարբերակներից որևէ մեկով.

1. «Այբ» կրթական հիմնադրամի գրասենյակից՝

- ա) Ծնողը անձնագրով և վճարման անդորրագրի պատճենով (եթե այն կա) այցելում է «Այբ»-ի գրասենյակ (հասցե՝ Երևան 0009, Կորյունի փող. 19ա, 9-րդ հարկ):
- բ) Լրացնում է դիմումի ձևը:
- գ) Կանխիկ ստանում է 970 ՀՀ դրամը:

2. Մարզային համակարգողի միջոցով՝

- ա) Ծնողը նախապես պայմանավորվում է մարզային համակարգողի հետ հանդիպման համար: Համակարգողների տվյալները դրված են www.kangaroo.am կայքէջի «Դպրոցներին» և «Կոնտակտներ» հատվածներում, ինչպես նաև կարող եք իմանալ երեխայի դպրոցից կամ «Այբ»-ի գրասենյակից:
- բ) Անձնագրով և անձնագրի պատճենով ծնողը հանդիպում է համակարգողին և վերջինիս ներկայությամբ լրացնում դիմումի ձևը:
- գ) Այս տարբերակի դեպքում 970 ՀՀ դրամը փոխանցվում է դիմումում ծնողի կողմից նշված բանկային հաշվեհամարին, որը կարող է լինել ինչպես ծնողի անձնական հաշվեհամարը, այնպես էլ ծնողի կողմից լիազորված երրորդ անձինը:

Հիշեցնենք, որ «Կենգուրու» միջազգային մաթեմատիկական խաղ-մրցույթի անցկացման կարգի 6.4. կետի համաձայն սույն թվականի ապրիլի 16-ից հետո «Այբ»-ը չի կարող վերադարձնել «Կենգուրու 2010» մրցույթի մասնակցության վճարները: